

Ըստ պատմութեան Nicétas Choniatasի (1150–1216), Պատանատեղիի քարէն կտոր մը փրցուած ու տարուած է Եփեսոս, յետոյ Կ. Պոլիս, ուր Մանուէլ կայսրը (1143–1180) նաւահանգիստէն ընդունելով զայն իր ուսերուն վրայ դրած տարած է իր պալատը:

Վաւերական յիշատակարաններ կը վկայեն թէ Ս. Ստեփանոսի գերեզմանը գտնուած ժամանակ գտնուեցաւ սրուակ մը: Բազմաթիւ վկայութիւններ կան թէ նախնի դարուց քրիստոնեաները հազար զոհողութիւններով կը հաւաքէին մարտիրոսաց արիւնը: Արդ Ս. Ստեփանոս քարկոծուած էր մեր Փրկչին մահուան տարին, հաւանական չէ՞ որ Ս. Կոյսը, Յովսէփ Արիմատացին և Իւղաբեր կանայք մեծ խնամքով հաւաքած ըլլան Յիսուսի մարմինը պատանքած ժամանակ, այն թանկագին արիւնը որ վազած է անոր վէրքերէն: Կանոնական Աւետարանները արդարև այս մասին բան մը չեն գրեր, բայց աւետարանական բոլոր դէպքերը արդէն ամէնքն ալ չեն գրուած: Անյայտ Աւետարանները այս մասին համաձայն են նախնի քրիստոնեաներու սովորութիւններուն և եկեղեցիի աւանդութեանց: Անոնք կ'ըսեն թէ Յովսէփ Արիմատացին Յիսուսի մարմինը լուալէ վերջ, պահեց այն ջուրը որ կարմրած էր Անոր արիւնով, աւելի բարեպաշտութեամբ պահեց վէրքերէն վազած արիւնը: Այս մասին բարեպաշտական պատմուածքներուն մէջ ծանօթագրութիւններ չեն պակսիր (Mis. հատ. Բ. էջ 329–331):

ԺԱ. ՅՈՒՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Յունաց եկեղեցին, որ կը կոչուի կաթողիկոս, Ս. Գերեզմանին դիմացը կը գտնուի, անոր երեք դուռ-